Հայկական Կինո 1924-1999. Լիակատար Կատալոգ, կազմողներ՝ Ս. Գուլեան, Ա. Երզնկեան, Ա. Թադեւոսեան եւ այլք, խմբագիրներ՝ Ս. Յարութիւնեան, Մ. Ստամբոլցեան եւ Ռ. Զաքարեան, Երեւան, «Արտագերս», 2000, 251 էջ: (Նոյն կատալոգը լոյս է տեսել նաեւ ռուսերէն եւ անգլերէն:)

Հայաստանի Կինոգէտների եւ Կինոլրագրողների Ընկերակցութիւնը հրատարակել է *Հայկական Կինո 1924-1999* հայ շարժանկարի լիակատար ֆիլմագրութիւնը՝ երեք առանձին հատորներով՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն: Յայժմ կատարուած նման աշխատանքներից սա առաւել լիակատարն է: (Համակարգման առաջին փորձը կատարել էր հայ կինոյի հիմնադիրներից Դանիէլ Դզնունին:)

Աշխատանքային խումբն օգտուել է մի շարք աղբիւրներից, որոնք նշուած են գրքի առաջաբանում: Տուեալները գրեթէ բոլոր հնարաւոր դէպքերում, – քանզի որոշ ֆիլմեր չեն պահպանուել, – ստուգուել են շարժանկարների բնագրերով: Հայաստանի Կինոգէտների եւ Կինոլրագրողների Ընկերակցութեան անդամների յամառ, յարատեւ ջանքերի շնորհիւ հաւաքական բնոյթի աշխատանքներ են կատարուել Մոսկուայի Պետական Կինոարխիւում (որտեղ պահւում են մինչեւ 1989 թուականը նկարահանուած հայկական ֆիլմերը), Հայաստանի Ազգային Ֆիլմադարանում, «Հայֆիլմ», «Հայկ» եւ «Երեւան» ստուդիաների, Հայաստանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարանի, Հայաստանի Կինեմատոգրաֆիստների Միութեան, ինչպէս նաեւ կինոգործիչների անձնական արխիւներում: Շատ փաստեր հրապարակւում են առաջին անգամ:

Հայկական կինոյի գոյութեան 75 տարուայ ժառանգութիւնը գիտական մօտեցումով ի մի բերելու, միջազգային չափանիշերին համապատասխան ներկայացնելու փորձ է սա: Կատալոգը մանրակրկիտ փաստագիտական ուսումնասիրութիւն է, ուր համակարգուած եւ ներկայացուած են գրեթէ սպառիչ տեղեկութիւններ հայկական կինոարտադրութեան մասին: Յանկացած բնագաւառում գիտութիւնն սկսում է այդօրինակ համակարգումից, այնպէս որ չափազանց գնահատելի է նման տեղեկատու ձեռնարկի պատրաստումն ու հրապարակումը:

Տարեգրութիւնը կազմուած է օրինակելի, գիտականօրէն մշակուած սկզբունքով եւ հետեւողականութեամբ: Շարժանկարները ներկայացուած են ըստ տարեթուերի, ժանրերի եւ տեխնիկական բոլոր յատկանիշերի՝ ընդգրկելով տուեալ շարժանկարին իրենց մեծ եւ փոքր մասնակցութիւնը բերած անձնաւորութիւնների մեծ մասի անունները (իսկ գեղարուեստական շարժապատկերների դէպքում՝ նաեւ մարմնաւորած դերերի անունները): Կինոյի տարեգրութեան պատկերն առաւել ընդհանրական է դառնում գրքի վերջում զետեղուած անուանացանկի եւ այբբենական ցանկի շնորհիւ, որից օգտուելը հեշտացնում է փնտրողի գործը: Իսկ Սուրէն Յասմիկեանի հակիրճ ու յստակ լեզուով գրուած նախաբանը յաջողապէս տալիս է հայ կինոյի անցած ոչ-երկարատեւ ճանապարհի ամբողջական պատկերը: Հարկ է

կարեւորել, որ աշխատանքային խմբում ընդգրկուած մասնագէտներից ոմանք (Սուրէն Յասմիկեան, Միքայէլ Ստամբոլցեան, Դաւիթ Մուրադեան) ներկայ ու մասնակից են եղել հայ ազգային կինոյի վերջին տասնամեակների պատմութեան ընթացքին, այն գիտեն ներսից: Արդ, երբ նոր ժամանակագրութիւն է սկսուել Հայաստանի պատմութեան մէջ, նոր ընթացք է ստացել նաեւ մշակոյթը: Նորակերտ իրականութեան մէջ ձեւաւորուող սերնդի համար, նախորդ շրջանի աւարտուն տարեգրութեան գոյութիւնը հնարաւոր է դարձնում եւ անգամ հեշտացնում ազգային կինեմատոգրաֆիայի պատմութեան յետագայ գիտական ուսումնասիրութիւնը:

Կատալոգը տալիս է հայկական կինոյի համայնապատկերը եւ միեւնոյն ժամանակ՝ սեղմ տեղեկութիւններ իւրաքանչիւր ֆիլմի մասին: Այդ կերպ ձեռք է բերուած ընդհանուրի եւ մասնաւորի զուգակցում, ինչը սոյն փաստագրական ուսումնասիրութեան անվիճելի առաւելութիւններից է, թէպէտ իրրեւ հայ ազգային կինոյի պատմութեան ողջ ընթացքի նկարագրութիւն, այն չի կարող սպառիչ համարուել: Ֆիլմերի ծանուցումները միշտ չէ որ յաջողուած են, սկզբունքի եւ ոճի առումով միասնական չեն: Տեղ են գտել նաեւ որոշ սխալներ. օրինակ, հայերէն եւ ռուսերէն տարբերակներում ճիշդ չի տրուած «Երաժշտութիւն» բազմանկարի բովանդակութիւնը: Բոլոր դէպքերում, նշուած թերութիւնները չեն նսեմացնում կատարուած աշխատանքի անուրանալի արժէքը:

Անշուշտ, կինոյի տեղեկատուին վայել կը լինէր նկարագարդ էջադրումը, սակայն միջոցների սուղ լինելու պատճառով անհնար է եղել դրա իրագործումը: Այդ բացը լրացուել է կատալոգի էլեկտրոնային տարբերակում, որը դրուած է համացանցում՝ www.arm-cinema.am հասցէով: Այն հարստացած է մօտ 300 ստեղծագործողների կենսագրական եւ ֆիլմագրական տուեալներով, ինչպէս նաեւ կինոգործիչների եւ շարժանկարների դրուագների լուսանկարներով: Պատրաստում է նաեւ *Հայկական կինո* խտապնակի թողարկումը:

Ինչպէս իրաւացիօրէն նշել է իր գնահատականի մէջ Ռուսաստանի Կինոգէտների եւ Կինոլրագրողների Միութեան նախագահ Միրոն Չեռնենկօն, գիրքն օգտակար կը լինի ոչ միայն հայ կինոգործչին եւ ընթերցողին, այլեւ՝ արտասահմանեան մասնագէտներին: Յատկանշական է, որ սոյն միութիւնը, որի ամէնամեայ մրցանակին են արժանանում ռուս կինոգէտներն, բացառութեան կարգով 2000 թուականի իր պատուոգիրը յանձնել է *Հայ կինո. 1924-1999* կատալոգին:

ՍԻՐԱՆՈՅՇ ԳԱԼՍՏԵԱՆ